«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՛ **ՆԶՊ և ԱԿ**

Մասնակից՛ **Երևանի ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցի զինղեկ, փոխգնդապետ Վլադիկ Հակոբյան**

Ղեկավար՝ **փոխգնդապետ Արտակ Իսահակյան**

Թեմա՝ **«Հակահրդեհային անվտանգության միջոցառումների իրականացման մեթոդիկան դպրոցներում»**

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ՄԱՍ.1 Հակահրդեհային անվտանգության միջոցառումների կազմակերպումը դպրոցներում 6

ՄԱՍ.2 Հրդեհի ժամանակ հրդեհաշիջման խմբի գործողությունների կազմակերպումը զինղեկի անմիջական հսկողությամբ 10

Եզրակացություններ և առաջարկություններ.....20

Օգտագործված գրականության ցանկ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հակահրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը, մասնավորապես, դպրոցներում խիստ անհրաժեշտ է հակահրդեհային անվտանգության համակարգերի տեղադրումը, սակայն մոնիտորինգի տվյալներով այն ոչ բոլոր դպրոցներում է տեղադրված։Յուրաքանչյուր մարդ տանը, աշխատանքի վայրում, ուսումնական հաստատությունում կամ բնության գրկում կարող է ընկնել(գտնվել) անկանխատեսելի իրավիճակի մեջ. որը բնութագրվում է միջավայրի իրավիճակի անսպասելի փոփոխությամբ, արտաքին անբարենպաստ գործոնների երկարատև և ինտենսիվ ազդեցությամբ, իսկ երբեմն առողջությանը և կյանքին անմիջական վտանգի առկայությամբ: Արտակարգ իրավիճակներ ծագելով որոշ տարածքի կամ օբյեկտի վրա՝ խոշոր վթարներ, բնական վտանգավոր երևույթներ, տեխնածին, տարերային կամ բնապահպանական կատաստրոֆաներ, համաճարակներ, գյուղատնտեսական կուլտուրաների և բույսերի վարակիչ հիվանդությունների լայն տարածում,տարբեր տեսակի զանգվածային ոչնչացման զենքերի օգտագործման, որը ընդգրկում կամ կարող է ընդգրկել մարդկային զոհեր, հասցնել նշանակալից վնաս մարդկանց առողջության և շրջակա միջավայրի, խոշոր նյութական կորուստների և խախտել մարդկանց կենսագործունեության նորմալ պայմանները: ՀՀ օրենք <<բնակչության պաշտպանութոյնը արտակարգ իրավիճակներում>>-1998թ.

Հակասություն է , որ ժամանակակից գերինֆորմացիայի՝տեղեկատվության պայմաններում հասարակության մեջ բացակայում է անվտանգ վարքի պահվածքի կուլտուրան: Մարդը ընկնելով բարդ, միևնույն ժամանակ անսովոր իրավիճակում, պահանջվելով արագ և ճշգրիտ գործողություններ, դառնում է լիակատար անօգնական և անկարող լուծել պարզագույն՝ հասարակ, բայց կյանքի համար կարևորագույն հարցեր: Դրա համար, որպեսզի նվազեցնենք նման իրավիճակում հայտնվելու հավանականությունը և մեծացնենք առողջության՝ բուն կյանքի պահպանման հավանականությունը, մարդը պետք է՝

-իմանա իրեն վտանգ ներկայացնող գործոնների ազդեցությունը,

-կարողանա կանխատեսել վտագավոր իրավիճակի ծագման, առաջացման հավանականությունը, կարողանա գործել նման իրավիճակում:

Վերը նշված երեք պայմանները մարդու գիտակցության մեջ ամրապնդելու համար անհրաժեշտ է անընդհատ, հետևողականորեն, կոմպլեքս և էտապներով նախապատրաստել ամբողջ ազգաբնակչությանը կարողանա համարժեք ձևով իրեն պահել արտակարգ իրավիճակներում, մասնավորապես հրդեհների ժամանակ: ՀՈՒ արդի խնդիրների, Հայոց բանակի առանձնահատկությունների, ժամանակակից զենքի և ռազմական զրահատեխնիկայի, կանոնադրությունների և սովորությունների մասին նախնական գիտելիքները ապագա զինվորները ստանում են դպրոցական ուսուցման ընթացքում՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակներում: Վերոնշյալի հաջողությունը կախված է զինղեկի մասնագիտական հմտություններից, նրա դասը հմտորեն կազմակերպելու և արդյունավետ վարելու ունակությունից: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը աճող սերնդի գաղափարական դաստիարակության կարևորագույն կողմերից մեկն է հանդիսանում:

Այս դաստիարակության կարևորությունը ներկայիս ժամանակաշրջանում պայմանավորված է ռազմական ագրեսիայի և սպառնալիքների ուժեղացմամբ և երկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման անհրաժեշտությամբ, ազգային բանակի մարտական պատրաստության,անձնակազմի ֆիզիկական և մասնագիտական ունակությունների բարձրացմամբ, որը կհամապատասխանի ժամանակի պահանջներին: Այստեղ կարևոր դեր ունեն զինղեկները, ովքեր պետք է կարողանան հմուտ և արդյունավետորեն կազմակերպել ուսուցման գործընթացը: Այս ամենի հետ կապված աճում է զինղեկների մասնագիտական պատրաստվածության, կիրառական հմտությունների և կարողությունների զարգացման նշանակությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ հաշվի առնելով ժամանակակից ռազմագիտության մեջ առկա նորամուծություններն ու զարգացումները, ինչպես նաև տարածաշրջանի անկայուն խաղաղության հեռանկարները, կարևորվում է ՀՈՒ բոլոր կառուցվածքների

գործունեության կատարելագործումը, այդ թվում նաև դպրոցներում զինղեկների մասնագիտական որակների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչն իր հերթին ապագա զինվորի արդյունավետ և հաջող զինվորական ծառայության հիմքն է հանդիսանում:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է վերլուծել զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման առանձնահատկությունները՝ շեֆ-զորամասի հետ համագործակցության շրջանակներում, ուսումնասիրել զինղեկների մասնագիտական գործունեության սկզբունքները, նպատակները, զարգացման մեթոդները:

Հետազոտության խնդիրներն են.

- ուսումնասիրել ՆԶՊ առարկայի դասավանդման ընդհանուր դրույթները,
- վերլուծել ՆԶՊ դասավանդող զինղեկների մասնագիտական գործունեության առանձնահատկությունները,
- ուսումնասիրել զինղեկների մասնագիտական գործունեության արդյունավետության գործոնները,
- վերլուծել շեֆ-զորամասերի և զինղեկների միջև համագործակցության առանձնահատկությունները և ազդեցությունը վերջիններիս մասնագիտական գործունեության վրա:

ՄԱՍ1. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ՈՒսումնական կազմակերպությունների (դպրոցներ, քոլեջներ, գիշերօթիկներ, ԲՈՒՀ-եր, ուսումնարաններ և այլն) հրդեհային անվտանգության հարցը միշտ արդիական է, քանի որ դրանցում առաջացած հրդեհները, որպես կանոն, ուղեկցվում են մարդկային և նյութական զգալի կորուստներով: Շատ կարևոր է նմանօրինակ շենքերում ժամանակին լուծել հակահրդեհային ջրամատակարարման, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերի, տարհանման ճանապարհների և ելքերի, էլեկտրատնտեսության, հրդեհաշիջման սկզբնական միջոցների հետ կապված հարցերը:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և քաղաքացիները ղեկավարվում են «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հրդեհային անվտանգության կանոններով և հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով:

Անդրադառնանք այն միջոցներին և միջոցառումներին, որոնք անհրաժեշտ են հրդեհների կանխարգելման համար:

Հանրակրթական նշանակության շենքերին ներկայացվող հրդեհային անվտանգության հիմնական պահանջները սահմանվում են ՀՀՇՆ 31-03.01-2014 շինարարական նորմերով, որոնք տարածվում են Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող հանրակրթական նշանակության շենքերի նախագծման վրա, անկախ դրանց սեփականության և կազմակերպաիրավական ձևից:

Հանրակրթական հաստատությունների հողամասերի սահմանից մինչև բնակելի շենքերն ու օժանդակ շինությունները, հասարակական և այլ նպատակային նշանակության շենքերն ընկած հեռավորությունը պետք է ընդունել հակահրդեհային, բնական լուսավորվածության և աղմուկից պաշտպանության նորմատիվ պահանջներով,բայց 10մ-ից ոչ պակաս:

Բարդ տեղանքի և տարածքի քաղաքաշինական սահմանափակումների առկայության դեպքում թույլատրվում է տնտեսական և օժանդակ կառույցների

տանիքները նախագծել որպես շահագործվող տանիքներ՝ հանգստի գոտիներ կազմակերպելու նպատակով: Շահագործվող տանիքներում անհրաժեշտ է նախատեսել առնվազն երկու տարհանման ելքեր: Շահագործվող տանիքները պետք է ունենան առնվազն 1,6մ բարձրությամբ ցանկապատեր՝ առանց հորիզոնական բաժանումների: Ուղղահայաց բաժանումների հեռավորությունները չպետք է գերազանցեն 0,1մ-ը:

Հանրակրթական հաստատությունների տարածքներում շենքերին ու շինություններին հրշեջ ավտոմեքենաների և ավտոսանդուղքների մոտեցման և շրջանցի ճանապարհները պետք է համապատասխանեն ՍՆԻՊ 2.07.01 շինարարական նորմերի պահանջներին: Նշված ճանապարհները պետք է ունենան կոշտ ծածկույթ: Հանրակրթական հաստատության շենքերը պետք է ապահովվեն հրդեհի ազդանշանման ու ազդարարման համակարգերով և պահակակետով: Հանրակրթական նշանակության շենքերի ծավալահատակագծային կառուցվածքը, գործառնական բլոկների համալիր կազմով, պետք է համապատասխանի հաստատության նշանակությանը,առանձնահատկություններին,շահագործման հարմարավետությանը, հրդեհային անվտանգության ապահովվածությանը, տեղի բնակլիմայական պայմաններին:

Հանրակրթական հաստատությունների շենքերի վերգետնյա հարկերի թիվը չպետք է գերազանցի երեքը: Առանձին դեպքերում, ինչպես նաև գոյություն ունեցող շենքերի վերակառուցման ժամանակ, թույլատրվում է նախատեսել 4-րդ հարկ, որտեղ արգելվում է նախատեսել տարրական դպրոցի դասարաններ: Նյութերի /մետաղ, փայտ և այլն/ մշակման, տեխնիկայի նորոգման արհեստանոցները նախագծվում են առաջին հարկերում կամ ըստ առաջադրանքի առանձին բլոկներում: Նշված արհեստանոցների նյութերի և պատրաստի արտադրանքի պահեստները պետք է ապահովվեն անմիջական ելքով դեպի տնտեսական բակ: Մարզադահլիճները պետք է նախատեսել առաջին հարկերում, հանդիսությունների դահլիճները կարող են տեղակայվել նաև երկրորդ հարկում: Մարզադահլիճները և հանդիսությունների դահլիճները պետք է ապահոված լինեն անմիջապես դեպի բակ բացվող լրացուցիչ ելքով: Տարհանման ուղիների լայնության հաշվարկի համար հանրակրթական հաստատությունների շենքերի հարկերում միաժամանակ

գտնվողների քանակը պետք է հաշվարկվի տվյալ հարկում գտնվող սենքերի տարողունակությունից ելնելով: Այն սենքերից, որտեղ միաժամանակ կարող են գտնվել 15 սովորողից ավել մարդ, ելքի դռների լայնությունը պետք է լինի 0,9մ-ից ոչ պակաս, իսկ դռները բացվեն դեպի դուրս՝ շարժման ուղղությամբ:

Միաժամանակյա 50 մարդուց ավելի ներկայության համար նախատեսված սենքերը պետք է ունենան ոչ պակաս երկու տարհանման ելք: Հարկերից տարհանման ելքերի քանակը պետք է լինի երկուսից ոչ պակաս, եթե դրանցում տեղակայված են սենքեր, որոնք պետք է ունենան ոչ պակաս երկու տարհանման ելքեր: Երկու և ավելի տարհանման ելքերի առկայության դեպքում, դրանք պետք է տեղավորվեն ապակենտրոնցված: Տարհանման համար նախատեսված սանդղավանդակները յուրաքանչյուր հարկի միջանցքներից, սպասասրահներից, նախասրահներից և ճեմասրահներից պետք է անջատված լինեն միջնորմներով և ինքնափակվող հարմարանքներով սարքավորված դռներով:

Նախասրահից մինչև երկրորդ հարկ տանող 2-րդ տեսակի սանդուղք կառուցելիս, նախասրահը պետք է առանձնացված լինի միջանցքներից և հարակից սենքերից 1-ին տեսակի հակահրդեհային միջնորմներով: Նկուղային (կամ որմնախարսխային) հարկից, որի սենքերում օգտագործվում կամ պահվում են այրվող նյութեր, առաջին հարկի սենքեր տանող սանդուղքները պետք է ցանկապատված լինեն 1-ին տեսակի հակահրդեհային միջնորմներով՝ հրդեհի դեպքում օդի ճնշումով նախամուտք - անցախցերի կառուցմամբ: Կոնստրուկցիաների նորմավորված հրակայունության աստիճանի ապահովման համար դրանք պետք է տոգորվեն (կամ ծածկվեն) հրապաշտպան նյութերով:

Սանդղավանդակները, բացառությամբ Ս2 տեսակի սանդղավանդակներից, յուրաքանչյուր հարկում արտաքին պատերում պետք է ունենան 1,2մ-ից ոչ պակաս մակերեսով լուսաբացվածքներ: Նկուղային կամ որմնախարսխային հարկերում գտնվող սենքերի համար անհրաժեշտ է նախատեսել առնվազն երկու տարահանման ելք անմիջապես դեպի բակ: Նշված սենքերի համար թույլատրվում է ելքերի կազմակերպումը առաջին հարկ առանձին աստիճանավանդակների միջոցով:

Մարզադահլիճի հատակի փայտե կոնստրուկցիաները պետք է ենթարկել հակապիրենով խորը մշակման: Նստատեղերը թույլատրվում է պատել այրման

ժամանակ թունավոր նյութեր չարտազատող նյութերով: Հանդիսությունների դահլիճի և ստեղծագործական խմբակների սենքերը պետք է առանձնացված լինեն հակահրդեհային 1-ին տեսակի միջնորմներով և 3-րդ տեսակի ծածկերով: 200մ2 և ավել մակերես ունեցող հանդերձարանների սենքերը պետք է կահավորված լինեն ծխահեռացման համակարգով:

Հանրակրթական հասատությունների շենքերում էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի սենքերի սնման համար անցկացվող մալուխների խրամուղիները պետք է նախատեսվեն 0,75 ժամ սահմանային հրակայունությամբ: Փայտամշակման և մետաղամշակման արհեստանոցներից պետք է նախատեսել լրացուցիչ ելք դեպի բակ անմիջապես կամ ուսումնական սենքերի հետ կապ չունեցող միջանցքի միջոցով: Հանրակրթական հասատությունների շենքերը չի թույլատրվում ջեռուցել կոշտ և հեղուկ վառելիքի և այլ ինքնաշեն վառարանների միջոցով, շենքերում տեղակայել կոշտ և հեղու վառելիքի պահեստներ:

Հանրակրթական հաստատությունների բոլոր սենքերը՝ բացառությամբ թաց կետերից, պետք է կահավորված լինեն հրդեհի ազդանշանման և ահազանգման ինքնաշխատ համակարգերով: Հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման համակարգերը պետք է միացված լինեն այդ բնագավառում լիազորված մարմնին: Հանրակրթական հաստատություններում պետք է նախատեսել ներքին հակահրդեհային ջրագիծ 2,5 լ/վրկ երկշիթ ծախսի հաշվարկով: Արտաքին հակահրդեհային ջրագիծ անհրաժեշտ է նախատեսե ՍՆԻՊ2.04.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Հանրակրթական հաստատությունների շենքերում անհրաժեշտ է նախատեսել էլեկտրասարքավորանքներ էլեկտրական լուսավորում, էլեկտրոնային կապի և տեղեկատվության փոխանցման համակարգ, հրդեհային ազդանշանման և ահազանգման ավտոմատ համակարգ և այլն: Շենքերի բոլոր սենքերում պետք է նախատեսել թաքնված էլեկտրահաղորդալարեր: Խոհանոցի, պահեստների, սանհանգույցների և այլ օժանդակ սենքերի էլեկտրամատակարարումը թույլատրվում է իրականացնել բաց էլեկտրահաղորդալարերի միջոցով: Էլեկտրավահանակները պետք է տեղադրել առաջին հարկերում: Դրանք թույլատրվում է տեղադրել նկուղային հարկերում, եթե ապահովված է նախատեսված սենքի հիդրոմեկուսացումը:

Մարդկանց տարհանման համար վթարային լուսավորություն պետք է նախատեսել նախասրահներում, հանդերձարաններում, միջանցքներում, աստիճանավանդակներում, ռեկրեացիոն սենքերում, հանդիսությունների, մարզական և ճաշարանի դահլիճներում, արհեստանոցներում, կինոխցիկում: Վթարների վերացման աշխատանքների իրականացման համար վթարային լուսավորություն պետք է նախատեսել էլեկտրավահանակների սենքերում, օդափոխման խցիկներում, ջերմային հանգույցներում, պոմպերի սենքերում: Հանդիսությունների դահլիճներից տարահանման ուղիները պետք է նշվեն վթարային լուսավորության ցանցին միացված ցուցանակներով: Կախված հանրակրթական հաստատությունների սենքերի նշանակությունից, ներքին հարդարումը և հարդարման ժամանակ պոլիմերային նյութերի կիրառումը պետք է համապատասխանի սանիտարահիգիենիկ և հակահրդեհային նորմերի պահանջներին:

Ինչպես հայտնի է նախադպրոցական տարիքում կյանքի մասին տեղեկությունները, այդ թվում նաև հրդեհային անվտանգության տարրական հմտությունների իմացությունը, ձեռք են բերվում խաղային գործունեության միջոցով, որտեղ ավելի ցայտուն է արտահայտվում մանկական ակտիվությունը:

ՄԱՍ2. ՀՐԴԵՀԻ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԶԻՆՂԵԿԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՄԲ

Հակահրդեհային կանոնների ուսուցումն իրականացվում է ընդհանուր ուսումնադաստիարակչական գործընթացի հետ մեկտեղ ինչպես դասերի, այնպես էլ արտադասարանային և արտադպրոցական միջոցառումների ժամանակ: Հրդեհային անվտանգության պահանջների կատարման կայուն հմտությունները ձևավորվում են երկարատև և համակարգված բացատրական աշխատանքի շնորհիվ: Աշակերտներին հրդեհային անվտանգության կանոնների ուսուցման հիմնական ձևը զրույցն է: Դասընթացներ անցկացնելիս պետք է պարզաբանվեն այն դեպքերը,

որոնք տեղի են ունեցել դպրոցի կամ շրջանի տարածքում (հրդեհային անվտանգության պահանջների բնութագրական խախտումները, գաղտնի ծխելը, արգելված վայրերում խարույկներ վառելը, առաջացած հրդեհները և այլն):
Հրդեհային թեմայով դասընթացները սովորողների մոտ պետք է դաստիարակեն պատասխանատվության զգացում հանրային սեփականության նկատմամբ, սովորեցնեն նրանց կրակից, էլեկտրական սարքերից, կենցաղային քիմիայի միջոցներից զգուշությամբ օգտվելու հնարքները: Հակահրդեհային բնույթի բացատրական աշխատանքը ներառում է դասընթացներ սովորողների և զրույցներ ծնողների հետ, թեմատիկ երեկոների և վիկտորինաների կազմակերպում, հակահրդեհային թեմաներով պատի թերթերի և կարգախոսների պատրաստում, հրդեհային ծառայության աշխատակիցների և վետերանների հետ հանդիպումներ, հակահրդեհային թեմաներով շարադրությունների և նկարների մրցույթների կազմակերպում, հակահրդեհային քարոզչության իրականացում դպրոցում, էքսկուրսիաներ հրշեջ մաս ու ծանոթացում հրշեջ տեխնիկայի և սարքավորումների հետ և այլն: Ծնողական ժողովներին անհրաժեշտ է պարբերաբար հրավիրել մոտակա հրշեջ մասի աշխատակիցներին, իսկ զրույց-հանդիպումներից հետո կազմակերպել վիկտորինաներ, հրդեհաշիջման միջոցների ձևերի ցուցադրություն: Էմոցիոնալ տեսակետից ավելի ազդեցիկ է մարված հրդեհի վայր տեսնելը: Կրակից վնասված կամ ոչնչացված շինության մոտ երեխաներին պետք է պատմել տվյալ հրդեհի պատճառի մասին, հատկապես եթե այն առաջացել է կրակի հետ երեխայի խաղի հետևանքով:

Ուսումնական տարվա սկզբին աշակերտներին անհրաժեշտ է ծանոթացնել դպրոցի համար հաստատված հրդեհային անվտանգության կանոններին, հրդեհի դեպքում տարհանման պլանին և հրշեջ ծառայություն կանչելու կարգին: Պարբերաբար դպրոցում պետք է կազմակերպվի ցուցադրական ուսումնական տարհանում: Հրդեհային անվտանգության կանոնների յուրացման, համապատասխան հմտությունների ձեռքբերման աշխատանքը հաջողություն կունենա միայն այն դեպքում, եթե գիտակցորեն ընկալվի դրանց պահպանման անհրաժեշտությունը: Դպրոցական տարիքն ընդունված է բաժանել 3 շրջանների կրտսեր, միջին և ավագ: Յուրաքանչյուր շրջան բնութագրվում է իր ֆիզիկական և

հոգեկան հատկանիշներով, աշակերտի սոցիալական դիրքով դպրոցում և կյանքում, և հետևաբար, նաև հրդեհային կամ այլ վտանգ ներկայացնող խաղերով: Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները առաջնորդվում են ուսուցչի, ծնողների և տարիքով իրենցից մեծ երեխաների կարծիքներով: Միջին կամ դեռահասության տարիքում սկսում է ձևավորվել մեծ լինելու զգացումը, ինքնագնահատականը, ի հայտ են գալիս նոր հետաքրքրություններ, բուռն կերպով ընթանում են ֆիզիկական զարգացումն ու կենսաբանական հասունությունը: Ավագ դպրոցական տարիքում յուրաքանչյուր անորոշ իրավիճակ ենթադրում է որոշակի ռիսկի առկայություն: Ի դեպ, այս տարիքում ռիսկը և նրա <<արժեքը>> կարող է ինչպես գերագնահատվել, այնպես էլ թերագնահատվել:

Հրդեհը, վթարը կամ այլ էքստրեմալ իրավիճակ բնականաբար ուղեկցվում են հուզական լարվածությամբ, ինչն երեխաների մոտ կարող է առաջացնել անկանխատեսելի հետևանքներ (շոկ, կակազում և այլն): Այդպիսի երևույթները բացառելու համար երեխաներին պետք է սովորեցնել հանգիստ վերաբերվել նմանատիպ արտակարգ պատահարներին, այսինքն իրականացնել հուզական լարվածության յուրօրինակ պրոֆիլակտիկա: Պրոֆիլակտիկայի այս տեսակը հիմնված է գործունեության օբյեկտիվ բովանդակության վերակազմակերպման վրա և կառուցվում է նախևառաջ հատուկ մարզման համակարգերի կիրառման վրա: Այս կամ այն հանձնարարությունը կատարելու հանկարծակի առաջացող անհրաժեշտության հետևանքով գործունեության ապակազմակերպումն ավելի հեշտ է վերացնել, եթե անսպասելիության գործոնն ինքն է դառնում ուսումնասիրության առարկա: Ուսուցողական ծրագրերի մեջ հրդեհային անվտանգության կանոնների ուսումնասիրությանն ուղղված այլ հարակից գիտաճյուղերի (օրինակ, քիմիայի) գիտելիքներ պարունակող հատուկ դասընթացների ներառումը նման վարժանքի գործառույթ է կատարում:

Բարդ իրավիճակներում (հրդեհի դեպքում) վարվելակերպը կարգավորելու պարտադիր պայման է հանդիսանում ժամանակը ճիշտ բաշխելու կարողությունը և գործողությունների հստակ ծրագրի ինքնուրույն կառուցումը: Նման կարողության ձևավորումը հազվադեպ է առանձնացվում որպես հատուկ խնդիր, չնայած որ այդ գործընթացի անկանխատեսելի զարգացման արդյունավետությունն ակնհայտ է: Այդ

պատճառով նպատակահարմար է դասի ընթացքում զինղեկը (անկախ դրա թեմատիկ բովանդակությունից) նախատեսել աշակերտների անվտանգությանը վերաբերվող հատուկ հանձնարարություններ: Նոր իրավիճակը, բարդ խնդրի ոչ ստանդարտ լուծում գտնելու անհրաժեշտությունը, գործունեության գերնշանակությունը և պատասխանատվությունը կորցնում են իրենց ստրեսային բնույթը, եթե անձը տիրապետում է բարդությունները հաղթահարելու ձևավորված հնարքներին: Ընդ որում, կարևոր է իմանալ նույն խնդրի լուծման մի քանի եղանակ, որպեսզի պայմանների փոփոխության դեպքում հնարավոր լինի ընտրել ստեղծված էքստրեմալ իրավիճակից փրկության լավագույն ճանապարհը:

Բարդ և հուզականորեն հագեցված իրավիճակներում վարքագծերի տարբեր ռազմավարությունների ձևավորման գործում շատ են օգնում խաղերը, այդ թվում նաև տարիքին համապատասխանող համակարգչային խաղերը: Խաղային գործունեությունը, հատկապես ժամանակակից տեխնիկական մակարդակի վրա իրականացված, հաճելի է թե կրտսեր, թե միջին, թե ավագ տարիքի դպրոցականների համար: Դրանց շնորհիվ հրդեհի ժամանակ կամ այլ բարդ իրավիճակներում գիտակից գործելու նկատմամբ ստեղծվող հետաքրքրությունը թույլ է տալիս հաղթահարել ներքին վախը, դժվարությունները, չիմացությունը և իր իսկ համար աննկատ կերպով անցնել նոր իրադրությանը տիրապետելուն, ձեռք բերել համոզմունք ինքնափրկության և ուրիշներին փրկելու կարողության մեջ, ճիշտ հաշվարկել սեփական ուժերը և հնարավորությունները:

Դպրոցը, համախմբելով աշակերտներին և ուսուցիչներին, միաժամանակ ուսուցմանը տալով համակարգված և սոցիալական բնույթ, խորը ազդեցություն է գործում երեխաների վրա, հետևաբար, հրդեհաանվտանգ կենսակերպի սկզբունքների յուրացումը պետք է դառնա դպրոցական կյանքի նորմ:

Միջազգային վիճակագրության տվյալների համաձայն հրդեհի դեպքում ավագ դպրոցականների մահվան դեպքերը ավելի քիչ են, քան միջին և կրտսեր դպրոցականներինը: Այդ տարիքում երեխաները ոչ միայն գիտակցում են հրդեհի առաջացման հիմնական պատճառները և հետևանքները, այլև գիտեն փոքր բռնկումների մարման եղանակները: Նրանց մտավոր գործունեությունն ավելի

ակտիվ և ինքնուրույն է: Սակայն դեռահասների մտածողական հետաքրքրությունների լայն ծավալը զուգակցվում է համակարգի բացակայությամբ և ցրվածությամբ: Երբեմն դեռահասները հակված են գերագնահատել սեփական գիտելիքների և, հատկապես, մտավոր կարողությունների մակարդակը: Գրեթե բոլոր ավագ դասարաններում հայտնվում են անտարբեր աշակերտներ, որոնց համար ուսումը երևակայական կյանքի հետ համեմատ անհետաքրքիր է թվում: Նրանք ուզում են իրենք նոր բացահայտումներ անել: Օրինակ, քիմիայի դասին փորձ կատարել գերազանցելով նյութի տրված չափաբաժինը, որի արդյունքում կարող է հրդեհապայթյունավտանգ խառնուրդ ստացվել: Միաժամանակ հրդեհի առաջացման տեսանկյունից պոտենցիալ վտանգ է ներկայացնում քիմիայի դասերին գործնական աշխատանքների և փորձերի կատարումը: Այդ պատճառով ուսուցիչը պարտադիր կարգով սովորողներին ծանոթացնում է հրդեհաշիջման պլանին քիմիայի դասարանում:

Հրդեհի դեպքում ուսուցիչը պարտավոր է.

-տեղեկացնել հրդեհի մասին (կանչել հրշեջ ծառայություն, հրդեհի մասին տեղյակ պահել դպրոցի ղեկավարությանը, հոսանքազրկել սենքը, նախապատրաստել դյուրավառ նյութերով արկղը դուրս բերման համար, մարտունակ վիճակի բերել հրդեհաշիջման սկզբնական միջոցները):

- տարհանել (դուրս բերել աշակերտներին փողոց կամ այլ անվտանգ սենք տարհանման պլանի համաձայն):

-ստուգել աշակերտների ներկայությունը (ցուցակով և քանակով):

-տեղաբաշխել տարհանված աշակերտներին (նշել վայրը, սենքը և այլ)

-կազմակերպել հրդեհաշիջումը հրդեհաշիջման սկզբնական միջոցներով (այրվող սենքերի մեկուսացման և ձեռքի տակ գտնվող միջոցներով հրդեհաշիջման կազմակերպում):

- հրշեջ ծառայության դեպքի վայր ժամանելուն զինղեկը պես մասնակցել հրդեհաշիջման աշխատանքներին (մատնանշել հրդեհի օջախին մոտենալու ամենակարճ ուղիները, այն վայրերը, որտեղ կարող են մարդիկ գտնվել կամ պահվում են քիմիական ռեակտիվ նյութեր):Բացի դրանից, լաբորատոր և գործնական աշխատանքների ընթացքում աշակերտները ծանոթանում են այրման

պրոցեսին, տարբեր նյութերի բոցավառման պայմաններին, ուսումնասիրում են կրակմարիչի կառուցվածքը և աշխատանքը:

Ընդհանուր առմամբ, միջնակարգ դպրոցում քիմիայի դասընթացները լայն հնարավորություններ են ընձեռնում հրդեհային անվտանգության կանոնները յուրացնելու, ինչպես նաև դեռահասների մոտ ձևավորելու հրդեհապայթյունավտանգ նյութերով աշխատելու հմտություններ և գիտելիքներ: Սակայն ոչ քիմիայի դասագրքերում, ո չ մեթոդական ձեռնարկներում այդ հարցերին պատշաճ ուշադրություն չի դարձվում:

Այս տարիքի երեխաներին հրդեհային անվտանգության կանոնները սովորեցնելիս նպատակահարմար է օգտագործել արձանագրված հրդեհների վերաբերյալ տեղեկություններ, ռադիո և հեռուստաելույթների նյութեր, տպագրված հոդվածներ, կազմակերպել հանդիպումներ հրշեջ պահպանության մասնագետների հետ: Այս տարիքային խմբի հետ աշխատելիս հատուկ ուշադրություն է պետք դարձնել նրանց մոտ ծխելու նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելուն, վտանգ և ավելորդ ռիսկ պարունակող հետաքրքրությունների բացառմանը:

Զինղեկը ուսումնական նյութը մատուցելիս պարտադիր կարգով պետք է պարզաբանվի հրդեհների հետևանքների ծանրությունը: Աշակերտների մոտ չպետք է առաջանա հրդեհային անվտանգության կանոնները խախտելու ցանկություն:

Հրդեհային անվտանգության դասընթացների ժամանակ ուսումնասիրվում են ավելի բարդ թեմաներ հրդեհաշիջման սկզբնական միջոցները, բնակելի շենքերում հրդեհների կանխարգելումը, էլեկտրական ցանցերի հրդեհավտանգավորությունը, հակահրդեհային սարքավորումները, ավտոմատ հրդեհաշիջման համակարգը, հրդեհի դեպքում վարվելակերպի կանոնները, իրավական պատասխանատվությունը հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար, տարհանման ժամանակ կրտսեր աշակերտներին օգնության ցուցաբերումը:

Որպեսզի հրդեհային անվտանգության դասընթացները աշակերտների համար լինեն հետաքրքիր և օգտակար, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ասպեկտները. կոնկրետ նյութի, եզրաբանության, փաստերի, հասկացությունների, միտումների, արդյունքների, կոնկրետ նյութերով աշխատելու միջոցների և ձևերի իմացություն. բացատրություն, մեկնաբանում, ստացված գիտելիքների կիրառում կառուցման

սկզբունքների, կապերի, տարրերի վերլուծություն, համադրում, հայտարարություն, գործողությունների համակարգի պլանի և հնարավորությունների մշակում, վերացական հարաբերությունների համակարգի ստացում գնահատական. եղած տվյալների և արտաքին չափորոշիչների հիման վրա կատարված դատողություն.
գործնական հմտություններ. հրշեջ-տեխնիկական ցուցահանդեսների, հրշեջ տեղամասերի այցելություն:

Բացի դրանից, ավագ դպրոցականների հետ աշխատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրանց մասնագիտական կողմնորոշման հարցը: Դպրոցների շրջանավարտները պետք է հստակ գիտակցեն, որ հրդեհային անվտանգության կանոններին անհրաժեշտ է հետևել միշտ և ամենուրեք կենցաղում, արտադրության մեջ, հանգստի ժամանակ սեփական և շրջապատող մարդկանց անվտանգության պահպանման համար:

Միջնակարգ դպրոցն ավարտելիս աշակերտը պետք է իմանա.

- հրդեհի առաջացման, զարգացման և հրդեհաշիջման դինամիկան,
- այրունակ միջավայրի և այրման աղբյուրների հիմնական հատկությունները,
- այրման ֆիզիկաքիմիական հիմունքները,
- հիմնական նյութերի հրդեհավտանգ հատկությունները,
- հրդեհների առաջացման պատճառները և դրանց կանխարգելման միջոցները,
- հրդեհաշիջման ձևերը և սկզբունքները,
- - հրդեհաշիջման հիմնական միջոցները,
- - տարբեր շինություններում և իրավիճակներում հրդեհային անվտանգության կանոնների պահանջները,
- հրդեհաշիջման սկզբնական միջոցները և դրանց հնարավորությունները, - հրշեջ ջոկատների մարտական աշխատանքը,
- հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը:

Աշակերտը պետք է կարողանա.

- գնահատել հրդեհային անվտանգությունը տարբեր վայրերում և տարբեր աշխատանքներ իրականացնելիս,
- բոցավառման կամ ծխապատման դեպքում գնահատել իրավիճակը, տանել

աշխատանքներ հրդեհի մարման ուղղությամբ,

- օգտվել հրդեհաշիջման սկզբնական միջոցներից, հրշեջ ծորակներից, հրշեջ ավտոմատիկայի համակարգերից,
- աջակցել հրշեջ ջոկատների աշխատանքներին,
- առաջին բժշկական օգնություն ցուցաբերել այրվածքների և այրման արգասիքներից թունավորման դեպքում:

Հրդեհային անվտանգության ապահովումը ներառում է նորմատիվ-իրավական ակտերի, հրդեհային անվտանգության կանոնների և պահանջների պահպանում, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումների իրականացումը ուսումնական հաստատության ապահովում հրդեհաշիջման սկզբնական միջոցներով, ուսումնական տարհանման կազմակերպում, կրակմարիչների վերալիցքավորում (անձնագրով հաստատված ժամկետներում) կամ դրանց ճնշման թույլատրելի ցուցանիշից ցածր իջնելու դեպքում վերանորոգում, էլեկտրացանցերի և կայանքների պաշտպանություն հրդեհներից, դրանց հրդեհաանվտանգ վիճակի բերում, տարհանման ուղիների և ելքերի պահպանում պատշաճ վիճակում, նկուղային և ցոկոլային սենքերի հակահրդեհային վիճակի ապահովում: Դպրոցը պետք է ապահովված լինի հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգով, հրդեհաշիջման սկզբնական միջոցներով ածխաթթվային և փոշային կրակմարիչներով, երևացող տեղերում պետք է փակցված լինեն հրդեհի դեպքում տարհանման պլանները: Տարհանման գծապատկերային պլանի հետ մեկտեղ մշակվում է անվտանգ և արագ տարհանում կազմակերպելու հրահանգ: Մանկավարժական անձնակազմի և աշակերտների հետ կազմակերպվում են հրդեհային անվտանգության դասընթացներ: Դպրոցներում կիսամյակը մեկ անգամ իրականացվում են ուսումնական տարհանումներ:

Դպրոցում հրդեհային անվտանգության պահպանման հիմնական նպատակն է աշակերտների և անձնակազմի կյանքի և առողջության պահպանումը, բռնկումների և հրդեհների առաջացման բացառումը:Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության աշխատակիցները պարբերաբար նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ են իրականացնում հանրապետության ուսումնական հաստատություններում (դպրոցներ, գիշերօթիկներ, ԲՈՒՀ-եր,

ուսումնարաններ և այլն): Հարցը հատկապես հրատապ է այն պարզ պատճառով, որ դրանցում առաջացած հրդեհները, որպես կանոն, ուղեկցվում են զգալի կորուստներով՝ և՛ մարդկային, և՝ նյութական: Ստուգման արդյունքները վկայում են, որ շենքերի և շինությունների գերակշիռ մասը շահագործվում է հրդեհային անվտանգության կանոնների բազմաբնույթ խախտումներով: Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կարգադրագրերով առաջարկված միջոցառումների անբավարար կատարման կամ չկատարման համար մի շարք օբյեկտների ղեկավարներ և պաշտոնատար այլ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության, սակայն իրավիճակը դեռևս շատ հեռու է բավարար լինլնեց: Մեր հանրապետությունում նմանօրինակ օբյեկտներում հիմնականում լուծված չեն հակահրդեհային ջրամատակարարման, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերի վերանորոգման և գործարկման, դրանց տեխնիկական սպասարկման, տարահանման ճանապարհների և ելքերի պատշաճ վիճակում պահելու, էլեկտրատնտեսությունում տեղ գտած թերությունների վերացման, հրդեհաշիջման սկզբնական միջոցներով ապահովելու և այլ հարցեր: Առավել անհանգստացնողն այն փաստն է, որ այդ օբյեկտների աշխատակիցների գերակշիռ մասը պարզապես անտեղյակ է հրդեհի առաջացման դեպքում իրենց կողմից կատարվող գործողություններից: Մոռացության է մատնված հակահրդեհային հրահանգավորման անցկացումը, սովորական երևույթ է դարձել հակահրդեհային կենսակարգի խախտումը: Տարիներ շարունակ չեն կատարվում տեսչության կարգադրագրերով առաջարկված հակահրդեհային միջոցառումները:

Չնայած հրդեհների նախականխման ուղղությամբ տեսչության կողմից իրականացվող զգալի աշխատանքներին, դեռևս անհնար է լիովին խուսափել հրդեհներից: Դրանց պատճառահետևանքային կապերի վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեցող իրավիճակը պայմանավորված է համապատասխան պաշտոնատար անձանց կողմից խնդրի նկատմամբ դրսևորած անտարբեր մոտեցմամբ: Նման իրավիճակում առաջացած յուրաքանչյուր հրդեհ կարող է խուճապ առաջացնել՝ լուրջ և ծանր հետևանքներով: Մենք բազմիցս անդրադարձել ենք նմանատիպ օբյեկտներում տեղի ունեցած

աղետալի հրդեհներին՝ վերլուծելով դրանց առաջացման պատճառներն ու հետևանքները: Այժմ անդրադառնանք այն միջոցներին և միջոցառումներին, որոնք անհրաժեշտ են հրդեհների կանխարգելման համար:

Հատկապես կարևոր է օբյեկտների աշխատակիցների և վարչակազմի, ինչպես նաև աշակերտների, ուսանողների՝ հրդեհային անվտանգության կանոնների իմացությունը: Հրդեհների կանխարգելման համար վարչակազմի և պետական հրդեհային հսկողության աշխատակիցների ջանքերը պետք է ուղղված լինեն հետևյալ խնդիրների լուծմանը՝

-հրդեհի բռնկման հնարավոր աղբյուրների բացառում,

-հնարավոր հրդեհների տարածման պայմանների բացառում,

-հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարահանումն ապահովող պայմանների ստեղծում,

-հնարավոր հրդեհների շիջման համար նպաստավոր պայմանների ստեղծում,

-բոլոր աշխատակիցների, աշակերտների, ուսանողների՝ հրդեհային անվտանգության կանոնների ուսուցանում:

Հնարավոր հրդեհների տարածումը բացառելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես, արգելել սանդղավանդակներում պահեստային և օժանդակ շինությունների տեղակայումը, դյուրավառ նյութերի պահումը, բաց կրակով աշխատանքներ կատարելը: Հակահրդեհային պատերի և ծածկերի որմնաբացվածքները պետք է կահավորվեն կրակի և այրման արգասիքների տարածումը կանխող պաշտպանիչ միջոցներով (հակահրդեհային դռներ, վարագույրներ և այլն), իսկ հակահրդեհային պատերի բացակները փակվեն չայրվողնյութերով: Հրշեջ ավտոմատիկայի և հրդեհաշիջման համակարգերն անհրաժեշտ է պահել աշխատունակ վիճակում, իսկ օբյեկտի տարածքն ու սենյակները պարբերաբար մաքրել այրունակ աղբից, թափոններից:

Եզրակացություններ և առաջարկություններ

Մարդկանց և նյութական արժեքների անվտանգ տարահանումն ապահովելու համար անհրաժեշտ է մշտապես ազատ վիճակում պահել բոլոր անցումները, ելքերը, միջանցքները, անցախցերը և աստիճանավանդակները: Աշխատակիցները պետք է ուսուցանվեն տարահանման ձևերին և մեթոդներին: Արգելվում է տարահանման ուղիների պատերի, հատակների, առաստաղների հարդարումը զանազան դյուրավառ նյութերով:

Հնարավոր հրդեհների հաջող մարման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան հակահրդեհային ջրացանց: Բայց միայն ջրի առկայությունը բավարար չէ: Պետք է մշտական տեխնիկական հսկողություն իրականացնել հրշեջ ջրավազանների, հիդրանտների, ջրագծերի, պոմպային համակարգերի նկատմամբ: Հրշեջ ջրավազանների և հիդրանտների տեղակայման վայրերը պետք է նշվեն լուսային ցուցանակներով, իսկ մոտեցման ճանապարհները մշտապես ազատ լինեն: Բոլորիս հայտնի են հրդեհաշիջման սկզբնական միջոցները՝ կրակմարիչներ, ներքին հրշեջ ծորակներ, ավազ և այլն: Պրակտիկան ցույց է տալիս, որ այդ “փոքր” հրշեջ տեխնիկան հաճախ շատ մեծ ծառայություն է մատուցում հրդեհների մարման ժամանակ: Հրդեհաշիջման աշխատանքների լիարժեք իրականացման համար շատ կարևոր է նաև, որ օբյեկտներին մոտենալու ճանապարհները հնարավորություն ընձեռեն հրշեջ ավտոմեքենաների՝ ցանկացած շենքի, ցանկացած կողմից և տարվա բոլոր եղանակներին (հատկապես՝ ձմռանը) մոտեցման համար:

Շատ կարևոր են հրդեհի առաջացման դեպքում օբյեկտի վարչակազմի և աշխատակիցների ճշգրիտ գործողությունները: Դրանք առաջին հերթին պետք է ուղղված լինեն մարդկանց անվտանգ տարահանմանը: Յուրաքանչյուր աշխատակից, հրդեհ հայտնաբերելու դեպքում պարտավորէ՝

- անհապաղ ահազանգել հրշեջ պահպանությանը՝ տեղեկություններ հայտնելով հրդեհի ճշգրիտ տեղի և շենքում մարդկանց գտնվելու վերաբերյալ,

և մինչև հրշեջների տեղ հասնելը միջոցներ ձեռնարկել մարդկանց տարահանման համար, և առկա հրդեհաշիջման միջոցներով (կրակմարիչներ, ներքին հրշեջ ծորակներ և այլն) ձեռնամուխ լինել հրդեհաշիջման աշխատանքներին: Օբյեկտի

ղեկավարները հրդեհ առաջանալու դեպքում պարտավոր են՝

- ստուգել, ահազանգել են հրշեջ պահպանությանը,
- համաձայն տարահանման մշակված պլանի միջոցներ ձեռնարկել մարդկանց տարահանման, ինչպես նաև խուճապը կանխելու ուղղությամբ,
- ղեկավարել հրդեհաշիջման աշխատանքները՝ մինչև հրշեջների տեղ հասնելը:

Հրդեհի ժամանակ չպետք է բացել դռները, պատուհանները, ինչպես նաև կոտրել ապակիները: Լքելով սենյակը կամ շենքը, անհրաժեշտ է փակել բոլոր դռներն ու պատուհանները, քանի որ օդի ներհոսքը նպաստում է կրակի արագ տարածմանը: Ուսումնական հաստատություններում ճիշտ կազմակերպված հրշեջ և նախապահպանական աշխատանքները, ինչպես նաև տեսչության կարգադրագրերով առաջարկված հակահրդեհային միջոցառումների կատարումը թույլ կտան բացառել հրդեհի առաջացման հնարավորությունը և խուսափել ծանր հետևանքներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը <<Հրդեհային անվտանգության մասին>>, ընդունված 2001թվականի ապրիլի 18-ին:
2. Համացանց
3. ՆԶՊ 8-11 դասարանի դասագրքեր:
4. Организация эвакуации школы.